կառավարում էր միակ թին, որը միեւնոյն ժամանակ եւ ղեկի պաշտօն էր կատարում:

Նրա ընկերները մէկը միւսի ետեւից դուրս էին սողում փոքրիկ խցիկից, որ անխուսափելի է ճապոնական ամեն մի նավաւկի վրա, եւ սիրալիր ժպիտով նայում էին մեր ետեւից:

Մի ոլոր էլ, եւ ահա երեւացին ռէյդում կանգնած մեծ նաւերի կայմերն ու ծխնելոյզները. սա՝ Նագասակիին մօտ լինելու նշանն էր:

Նեղուցը յանկարծ բացւում է:

Քաղաքը ինքը մեր դէմ է լողում եւ շուտով պատում է մեզ օղակի պէս:

Ամերիկեան կրէյսերը, որի մօտով մենք անցնում ենք, նւագում է ի պատիւ մեզ ռուսական օրհներգը, որին շուտով յաջորդում է ամերիկական ազգային երգը, հնչուն ու սահուն կերպով փուեելով ծովի վրա: Բայց ընդհանրապէս շատ քիչ շարժում կայ ծոցում ամառւայ շնորհիւ:

Ռէյդում կանգնած են մի քանի կէտորս նաւեր, երկու-երեք ճապոնական սովորական շոգենաւ, այլ եւ լայն ծոցի խորքում միայնակ կանգնած է ֆրանսիական մի գեղեցիկ զրահակիր:

Բոլորովին այլ պատկեր է ձմեռը, երբ այդ ծոցի մէջ աշխարհի ամեն կողմից հաւաքւում են ռազմական տորմիղ-ները: Այն ժամանակ օդի մէջ ծածանւում են հազարաւոր գոյնզգոյն դրօշակներ. ծովը կենդանանում է փորձեր անող մակոյկներով. սուր ճչում են շոգեմակոյկների սուլիչները, որոնք զինւորական հիւրերին մի նաւից միւսն են փոխադրում. նրանց ետեւից թնդում է հրաշէնների զարկը, որը մի ճշմարիտ թնդանօթաձգութիւն է դառնում, երբ ծոց է մտնում մի նոր